

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ՈՉ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ
(ԳՅՈՒՆՏԵՐ ԱՅԽ – ՊԱՌԻԼ ՑԵԼԱՆ)**

Գյումտեր Այխը (1907-1972) հավանաբար առաջինն էր, ով գերմանական քնարերգություն ներմուծեց գույքագրման (ինվենտարիզացիայի) մոտիվը: Գերությունից տուն վերադարձողի համար որոշել գույքի չափերը նույնն է, ինչ որոշել գոյության սահմանները: Այլ բան է, որ երբ վերադառնում են հենց ոչնչացման անդունդից, մասամբ ստիպված են որոշել նաև չգոյության սահմանները: Այդպիսին է Պաուլ Ցելանի (1940-1960) դեպքը:

Այխի քնարական սուբյեկտն ունի պահանջ շրջահայելու փլատակները և ընկերակցելու անցյալի աննշան մնացուկներին: Նա չի սգում, քանի որ նրա առարկան ոչ թե կորուստն է, այլ՝ այն, ինչը հնարավոր է ծանաչել որպես պահպանված, և քանի որ նա գտնվում է զարգացման Օ կետում, իրականության հետ որևէ հարաբերություն հաստատելու համար նախ ինքը ստիպված է կառուցել այդ իրականությունը: Այդպիսի բանաստեղծությունը գործ ունի ամենաանմիջական իրականության հետ. կարող է թույլ տալ իրեն այդպիսի անմիջականություն, քանի որ լիցքավորված է հոգևոր անմիջականությամբ, մասնավորապես այնպիսի, որը չի վարանում օգնություն խնդրելիս խմբագրել սեփական հպարտությունը կամ ենթարկվել ամենաանսովոր խոնարհումներին: Շրջապատը թշնամական չէ, օտար չէ, քանի որ նախապես ծանաչվել է քնարական սուբյեկտի փրկության և գոյատևման պայման:

«Ես գրում եմ բանաստեղծություններ՝ իրականության մեջ կողմնորոշվելու համար: Ես դիտում եմ այն որպես եռաչափ կետեր կամ նշանաձողեր, որոնք նշում են անծանոթ հարթության վրա ծավալվող շարժումը: Ինձ համար իրերը միայն գրելու շնորհիվ են ստանում իրա-

կանություն: Դրանք ոչ թե իմ ենթադրությունն են, այլ՝ իմ նպատակը»¹: Սա իրականության իրագործման, կամ բանաստեղծության շնորհիվ հավաստիություն գտնելու ծրագիր է: Այն ոչ թե արտապատկերում է, այլ՝ ուրվագծում: Լեզվական հաստատման շնորհիվ այն հնարավոր է դարձնում ճանաչողությունը, կողմնորոշումը, քննադատությունը և ընդդիմությունը: Ահա ինչու Կառլ Կրոլվը կոչել է Գյունտեր Այխին «Բնական բանաստեղծության հաղթահարող»: Այս իմաստով ծրագրային կարելի է համարել «Գույք» բանաստեղծությունը:

Inventur

Գույք

*Dies ist meine Mütze,
Dies ist Mein Mantel,
Hier ist mein Rasierzeug
Im Beutel aus Leinen,*

*Սա իմ գլխարկն է,
Սա՝ վերարկուն,
Ահա ածելին
Քաթանե պայուսակի մեջ,*

*Konservenbüchse:
Mein Teller; mein Becher;
Ich hab in das Weissblech,
Den Namen geritzt.*

*Պահածոյի տուփն
Իմ ափսե՛ն է, իմ բաժակը,
Այս թիթեղի մեջ
Անունս եմ ձանկռել:*

*Geritzt hier mit diesem
Kostbarem Nagel,
Den vor begerlichen
Augen ich berge.*

*Ճանկռել եմ
Այս թանկ մեխով,
Որը թաքցնում եմ
Ազահ աչքերից*

*Im Brotbeutel sind
Ein Paar wollene Socken
Und einiges, was ich
Niemand verrate.*

*Հացի պարկում
Մի զույգ բրդյա գուլպա
Ու մի բան ևս,
Որին երբեք չեմ դավաճանի,*

*So dient es als Kissen
Nachts meinem Kopf.
Die Pappe hier liegt
Zwischen mir und der Erde.*

*Գիշերով սա բարձ է
Գլխիս համար:
Թղթապանակն է ընկած
Իմ և երկրի միջև:*

*Die Bleistiftmine
Lieb ich am meisten:
Tags schreib sie mir Verse,
Die nachts ich erdacht.*

*Ամենից շատ սրտովս է
Մատիտե՛ն ականը,
Ցերեկով նա գրում է
Գիշերով հորինածս ոտանավորները:*

¹ Մեջբերումն ըստ՝ Ralf Schell, Geschichte der deutschen Literatur seit 1945, Stuttgart, 2003, S 91.

*Dies ist mein Notizbuch,
Dies ist meine Zeltbahn,
Dies ist mein Handtuch,
Dies ist mein Zwirn.¹*

*Սա իմ նոթատետրն է,
Սա իմ վրանն է,
Սա իմ սրբիչն է,
Սա իմ թել ու ասեղն է:*

(Տողացի թարգմանությունը՝ Ս. Ստեփանյանի)

Եթե Ռիլկեն երազում էր, որ բանաստեղծության ուժով իրերը մուտք գործեն անտեսանելիության ոլորտ, ապա այստեղ ըստ ամենայնի նկատի է առնված այն, ինչի հետ բանաստեղծությունը կկարողանա գործ ունենալ ամենակուլ անտեսանելիության պատուհասած արշավանքից հետո: Խորքում, իհարկե, Այխի բանաստեղծության մեջ իշխում է գիտակցությունն այն բանի, որ իրականում Երկրորդ աշխարհամարտի ողբերգության հետևանքը ոչ թե իրերի, այլ մարդու և մարդկային կորուստն է: Կառչելով իրերից, որոնք դժվարությամբ է կարողանում հավաքել իր փշրված աշխարհապատկերի մեջ, Այխի քնարական սուբյեկտը նպատակ ունի հավաքել հենց այդ աշխարհապատկերը, և հետևաբար՝ ինքն իրեն: Նյութական ավերակների հիմքում, իհարկե, անտեսանելիորեն ներկա է գաղափարախոսության փլատակը և նրա, ով կարող է զգալ ու մտածել: Նա ոչ միայն իրերի մեջ մահացածն է, այլև նա, ով պատասխանատու է այդ ոչնչացման համար: Հիմա նա ցանկանում է հարություն առնել և դուրս գալ այն անտեսանելիությունից, որի մեջ ցանկանում էր ներքաշել նաև իրերը: Այդ բանը հնարավոր է անել կառչելով, ինչպես ասվեց, իրերի այն համառությունից, որով նրանք բանաստեղծականացման և ուրեմն կերպափոխության հակված լինելով, այնուամենայնիվ պահում են մի բան, որը թողնում է նրանց միանգամայն պրոզաիկ: Հետևաբար բանաստեղծությանը սպառնում է որոշակի պրոզաիկացում. այն առկա է «Գույքը» բանաստեղծության մեջ: Ողջ խնդիրն էլ, սակայն, հենց այն է, որ պրոզաիկացումը բանաստեղծության համար այնս պառնալիք չէ, այլ՝ դժվարությամբ և, ով գիտե, թե ինչ էական թվացող պահերի կորստյան գնով ձեռք բերելի առավելություն:

1958 թ. Փարիզի «Ֆլինկեր» հրատարակչության շրջաբերական հարցումին պատասխանելով (այն ուղղված էր փիլիսոփաներին և գրողներին՝ պարզելու, թե ինչով են զբաղվում ներկայում և ինչպիսի ծրագրեր ունեն) Պաուլ Ցելանը (1920-1970), որը փորձում էր Երկրորդ աշխարհամարտի *առաջ* և *առաջ հետո*-ն հաշտեցնել գերմանական քնարերգության բանաստեղծական դեստրուկցիայի միջոցներով, պատասխանում է.

«Գերմանական պոեզիան շարժվում է իմ կարծիքով այլ ճանապարհով, քան ֆրանսիականը: Քանի որ նրա հիշողության մեջ ամենամոռյալ

¹ Ibid.

բաներն են, իսկ շուրջը ամեն բան ավելի քան կասկածելի է, վերջինս ավանդույթը շարունակելու ողջ ցանկությամբ, որում գտնվում է, այլևս չի կարող խոսել այն լեզվով, որը, թվում է, նրանից դեռ սպասում են որոշ նրան հակված ունկնդիրներ: Նրա լեզուն դարձել է առավել սթափ, փաստացի, այն չի վստահում «գեղեցիկին», փորձում է լինել ավելի ծշմարիտ...

Այդ լեզուն, պահպանելով արտահայտչամիջոցների անհրաժեշտ բազմազանություն, հոգ է տանում ավելի շատ ստուգության մասին: Այն ոչինչ չի լուսաբանում, չի «բանաստեղծականացնում», այլ պարզապես անվանում և դասավորում է իրերը, այն փորձում է կատարել տրվածի ոլորտի չափումը... Բայց ես թերևս շեղվեցի: Ախ այդ բանաստեղծները: Ըստ էության լավագույնը նրանց համար կլիներ այն, որ նրանք երբևէ գրեն իսկական վեպ»¹:

Այսպիսի մտորումներն իհարկե շատ հեռու են Ռիլկեի և Գեորգեի սկզբունքներից: Բարձրագույնը, որին մշտապես միտված էր պոեզիան, այստեղ գլխատված է և այն, ինչը մի ժամանակ հաստատված էր վերևում, հայտնվել է ցածրում՝ այդ ցածից կանչելով նրան, ով կուզեր գտնել իրականության վեկտորներ՝ բանաստեղծին:

Անհրաժեշտ է գտնել նաև լեզուն, որի առնչությամբ դեռ շատ բան հարկ է պարզել, և հատկապես այն, թե ինչ է կիսում այն իրերի հետ միասին. ունա՞կ է արդյոք կիսել: Եվ գուցե այդ իրերի հանդեպ մշտական եղեմական գերադրության մեջ գտնվելով, նա այլևս անկարող է իջնել հավասարության սանդղակի վրա՝ վերցնելու համար իրեղենը և կիսելու համար շատ բան նաև այս աշխարհում: Նույն 1958 թ., Բրեմենի գրական մրցանակի ստացման արարողության ժամանակ արտասանած ձառում Ցելանն ասել է.

«Նա, այդ լեզուն, չդարձավ կորուստ, ընդ որում՝ հակառակ ամեն բանի: Նա ստիպված էր անցնել սեփական անպատասխանատվությունների, արգասավոր համրության, մահացու խոսքի հազարավոր խավարների միջով: Նա անցավ և մի բառ չթողեց այն մասին, ինչ պատահեց. բայց նա անցավ այդ պատահածի միջով: Անցավ և նորից հառնեց՝ հարստացած այդ ամենով:

Այդ լեզվով ես այն տարիներին և դրանից հետո էլ փորձել եմ բանաստեղծություն գրել. խոսելու համար, կողմնորոշվելու համար [ընդգծումը՝ Ս. Ս.], պարզելու համար, թե որտեղ եմ գտնվում և ինչ է ինձ հետ պատահում... իրականություն ուրվագծելու համար»²:

¹ Paul Celan, Antwort auf eine Umfrage der Librairie Flinker, Paris, in: Der Meridian und andere Prosa, Frankfurt am Main, 2008, S. 21 u. f.

² Paul Celan, Ansprache anlässlich der Entgegennahme des Literaturpreises der Freien Hansestadt Bremen, in: Der Meridian und andere Prosa, Frankfurt am Main, 2002, S. 38.

Բանաստեղծելու Այխի և Ցելանի մոտեցումները թվում են շատ մոտ, գրեթե նույնը: Եվ այդուհանդերձ կարելի է նկատել, որ նույնության սպասումը տապալող տարբերությունը, որն ըստ ամենայնի առկա է այստեղ, տեղադրում է լեզուն և իրերը հակադիր բևեռներում: Այխը շարժվում է դեպի իրերի նախնական իմաստները և այդ իմաստների լեզուն: Ցելանը հարցնում է հենց լեզվի հնարավորության մասին: Լեզուն, քանի որ ճանաչել է ծայրագույն բևեռացման ճակատագիրը և անցել է բազում *անպատասխանատվությունների* միջով, բանաստեղծական պատասխանատվություն կդառնա ոչ թե այրելով կամուրջներն այն ամենի հետ, ինչի վկան եղել է, ընկնելով մոռացության մեջ և ուրեմն սպանելով իր մեջ վկային, այլ՝ մնալով վկա, սակայն՝ բանաստեղծորեն, հետևաբար կարողանալով վկայության մեջ մռայլ բաների կողքին վերարարել նաև այն, ինչը պիտի կլանվեր այդ մռայլի կողմից:

Կատարելով գույքագրում Գյունտեր Այխը շոշափում է սեփական գոյության սահմանները: Ցելանը շոշափում է լեզվի սահմանները, որպեսզի այդ սահմանների ոչնչին բախվող լեզուն ճանաչի հիասթափությունը և դառնա արարող:

Ցելանի պատասխանը Այխին կարելի է համարել «Ծեմից շեմ» շարքի «Խոսիր նաև դու» բանաստեղծությունը: Կարդանք առաջին չորս տները:

Sprich auch du

*Sprich auch du,
Sprich als letzter;
Sag deinen Spruch.*

*Sprich –
Doch scheide das Nein nicht vom Ja.
Gib deinem Spruch auch den Sinn:
Gib ihm den Schatten.*

*Gib ihm Schatten genug,
Gib ihm soviel,
Als du um dich verteilt weißt zwischen
Mitternacht und Mittag und Mitternacht.*

Խոսիր նաև դու

*Խոսիր նաև դու,
Խոսիր ինչպես վերջինը,
Ասա քո խոսքը:*

*Խոսիր -
Բայց մի բաժանիր ոչը այսօրից:
Տուր քո խոսքին իմաստ.
Տուր նրան ստվեր:*

*Տուր նրան բավականաչափ ստվեր,
Տուր նրան այնքան,
Որքան, որ գիտես տրված է քեզնից
Քո շուրջ գիշեր, կեսօր, կեսգիշեր:*

*Blicke umher:
Sieh, wie es lebendig wird rings –*

*Beim Tode! Lebendig!
Wahr spricht, wer Schatten spricht.¹*

Շուրջդ տես.
Տես, ինչպես է կենդանանում
շուրջդ –
Տես, մեռած է. ողջ է:
Հշմարիտ է խոսում նա, ով
խոսում է ստվերներ:
(Տողացի թարգմանությունը՝ Ս.Ս.)

Նա, ով խոսում է վերջում, չի խոսում վերջը: Այլ կերպ ասած, նա չի խոսում վերացման այն լեզվով, որի մեջ ամեն խոսվող իր և հանգամանք իր մաշկի վրա ծաշակում է մահկանացու խոսողի ներգործությունը: Հավանաբար խոսել ստվերներ նշանակում է հաղորդել լեզվին գոյության իրեղեն թանձրությունը, որից այն մշտապես կտրվում է լեզվի վերացական դոմինանտայի պայմաններում: Ցեղանը չի անջատում այո-ն ոչ-ից, ինչպես և մեռյալը ողջից: Նա, ով խոսեց առաջինը՝ Ադամը բառերով տարանջատեց համակ գոյը: Բառերը իրերի հանդեպ իշխանություն ստացան հենց այն պատճառով, որ խզեցին իրերի հետ միևնույն հարթության վրա գոյելու եղանակը: Ադամը բաժանեց կյանքը և մահը, երկինքը և երկիրը, լեզուն և աշխարհը: Նա խոսում էր առաջինը՝ չիմանալով լեզվի համար երբևէ նաև վերջինի կողմից խոսվելու հեռանկարի մասին: Ադամի պարագայում, սակայն, լեզուն կոչված էր արարման կենտրոն՝ մասնակցելու աստվածային արարմանը: Աստծո համար Ցեղանը գործածում էր Ոչ ոք հիպոստազավորված դերանունը: Արարչի և ոչնչի այսպիսի կապը մատնանշում է ստեղծագործության էության մասին բանաստեղծի բարդ պատկերացումը: Արարումը մղված է ոչնչի մեջ, ահա ինչու այո-ն չպիտի անջատվի ոչ-ից:

Գյուլնտեր Այխը ցանկանում էր պոեզիայի շնորհիվ իրականության բերել իրականությունը: Պաուլ Ցեղանը ցանկանում էր բանաստեղծորեն ծանաչել նաև ոչինչը: Այդպիսի արարող ծանաչողությունը թերևս կարող է ծածկել աշխարհի անիմաստությունը: Ի՞նչ է մնում, երբ աշխարհն անցնում է: Չէ՞ որ աշխարհը, եթե այն նշան է, չի կարող բովանդակել իր իմաստն իր մեջ: Ցեղանի մեկ ուրիշ բանաստեղծության մեջ ասված է.

*Die Welt ist fort, ich muss dich tragen². Աշխարհն անցել է, ես պիտի կրեմ քեզ:
(Տողացի թարգմանությունը՝ Ս. Ս.)*

¹ Paul Celan, Die Gedichte, Frankfurt am Main, 2005, S. 85.

² Paul Celan, Gedichte, S. 210. Այս բանաստեղծության մասին տես Ս. Ստեփանյան, Պաուլ Ցեղանը չլնդհատվող երկխոսության համար, Համատեքստ – 2011, Երևան, էջ 34 և հաջ., ինչպես նաև Jacques Derrida/Hans-Georg Gadamer, Der ununterbrochene Dialog, Frankfurt am Main, 2004:

Այս Դու-ն, որին բանաստեղծը խոստանում է կրել, կրոնի Աստված չէ: Ուրեմն այնկողմնային-տրանսցենդենտ էություն չէ: Բայց մյուս կողմից այն ամենը, որ պիտի այսկողմնային լիներ և որպես այդպիսին հասկացվեր, անմնացորդ անցել է: Ողջ աշխարհն է անցել:

Բանաստեղծության տեղը, ինչպես դա պատկերացնում էր Ցելանը, չի կարող գտնվել գույքագրման այո-ի կամ ոչ-ի ցուցակներից որևէ մեկում, աշխարհի այս կամ այն կողմում: Այն խոսում և խոսեցնում է այստեղից այնտեղ և այնտեղից այստեղ:

Բանալի բառեր. բանաստեղծություն, իրականություն, աղետ, լեզու, վկա, բառ, գույք, մարդ

**Перспектива стихотворения в непозитическое время
(Гюнтер Айх – Пауль Целан)**

Резюме

Автор статьи пытается сопоставить поэтический опыт осмысления послевоенной реальности (физической и духовной) немецкого “ландшафта” в творчестве таких поэтов как Гюнтер Айх и Пауль Целан. Айх склонен проводить поэтическую инвентаризацию реальности, того, что выжило, между тем как Пауль Целан творит реальность именно в той точке, в которую и через которую ворвалась катастрофа.

Ключевые слова – стихотворение, реальность, катастрофа, язык, свидетель, слово, инвентарь, человек

Stepanyan Sergey

**The Prospects of the Poem in non-poetical Times
(Gunter Eich – Paul Celan)**

Summary

In the present article the author makes some parallels between two german poets – Gunter Eich und Paul Celan- in regard to their attitude towards political and spiritual situation after the Second World-War. Eich is inclined to give a second life for to realia that are saved after the catastrophe. On the other hand, Celan makes an attempt to write and stay in the point in which the catastrophe was the case.

Key words - reality, catastrophe, language, testimony, word, goods, human